Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՒՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍԲԲՈՑ ՂԵՒՈՆԴՅԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԻՆ

(Բըրբենկ, Սրբոց Ղեւոնդյանց եկեղեցի, սեպտեմբեր 12, 2010 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Փայտ կենաց կանգնեալ ի մէջ տիեզերաց.
յոյս եւ ապաւէն ազգի մարդկան.
Սա պահեսցէ զմեզ ամենայն վտանգից.

Սուրբ խաչ Քո շնորհեցեր զէն եկեղեցւոյ Քում սրբոյ.
Սովաւ պահպանեա զժողովուրդս Քո, Քրիստոս:
(Շարական)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ.

Անհուն խնդությամբ եւ բերկրանքով է լցված Մեր հոգին: Երեկ կատարեցինք օծումը թեմի առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդյանց եկեղեցու, որը կառուցվել է հավատավոր հայորդիներիդ սրտաբուխ նվիրատվություններով ու պատրաստական հանձնառություններով: Այսօր համախմբվել ենք նորաօծ եկեղեցու կամարների ներքո՝ Խաչվերացի տոնական խորհրդով մեր Տիրոջը երկրպագելու ու փառաբանելու, որ տիեզերապահպան Իր խաչը հույս ու ապավեն դարձրեց եւ զենք պահպանության Իր Սուրբ Եկեղեցուն, համախմբվել ենք գոհություն հայտնելու, որ բազում արդյունքներով Փրկիչ մեր Տերը օրհնում է մեր հոգեւոր ու ազգային կյանքը շենացնելու մեր հույսերն ու ջանքերը:

Հայրենիքում, թե նրանից հեռու, խաղաղության մեջ, թե՝ փորձությունների, ապահովության մեջ, թե՝ նեղությունների, բոլոր ժամանակներում հառնել են հայոց եկեղեցիները, խաչը պարզել երկինք, որ Աստծո շնորհը եւ օրհնությունը լուսավորեն Քրիստոսին հուսացողների կյանքը եւ ուղղորդեն դեպի փրկություն ու հավիտենական կյանք: Ապավինած մեր Տիրոջ փրկագործ խաչին, մեր ժողովուրդը հավատքով զորացավ ու ապրեց աշխարհի տարբեր երկրներում, նաեւ Միացյալ Նահանգներում, իր կյանքը կառուցեց ու բարձրացրեց, պահպանեց ազգային արժեքներն ու ավանդները: Ձեր հավատքով, հույսով ու սիրով կառուցված Սրբոց Ղեւոնդյանց եկեղեցին, ահավասիկ, նույնպես պիտի լինի ձեր հոգու ապավինության վայրը, որի հարկի ներքո երկնառաք շնորհներով զորանալով՝ շարունակ պիտի նորոգեք ազգային-եկեղեցական ձեր կյանքը՝ խարսխված Ավետարանական սուրբ պատգամների, մեր սուրբ հայրերի ժառանգության ու հայրենական ավանդների վրա:

Հավատքով կառուցված եւ աղոթքով լեցուն եկեղեցին դառնում է տուն Աստծո, դառնում է նաեւ այն վայրը, որտեղ սկսվում է հոգեւոր տաճարացումը հավատացյալների. «Եւ դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր»՝ «Եւ դուք իբրեւ կենդանի վէմեր, կառուցվում էք որպէս հոգեւոր տաճար» (Ա Պետ. 2.5), -ասում է առաքյալը: Եկեղեցում է, որ աղոթքով, սրբարար պատարագով ու Տիրոջ կենդանարար Մարմնի ու Արյան հետ հաղորդությամբ նորոգվում ենք հոգով ու մարմնով, եկեղեցում է, որ Աստծո Խոսքով, սրբերի օրինակով

ու բարեխոսությամբ զորանում ենք ու ամրանում, հագնում հոգեւոր սպառազինությունը ընդդեմ չարի ու անարդարի: Եկեղեցին այն բարձունքն է, ուր պայծառակերպվում ենք Սուրբ Խաչով մեզ պարգեւված փրկության լույսով եւ Սուրբ Խաչով զտնում հույս ու ապավինություն: Քարեղեն այս կառույցին ոգի ու շունչ տվողը դուք եք: Դուք եք Քրիստոսի կենդանի եկեղեցին: Ձեզանով, ձեր հավատքով ու աղոթքով, ձեր բարեպաշտ կյանքով է, որ տերունական խաչով պսակյալ նորակառույց եկեղեցին պիտի միշտ լինի տուն Աստծո, Աստծո շնորհի եւ օրհնության ակունք ձեր կյանքում, համայն հայոց եւ Ամերիկայի կյանքում:

Սիրելիներ, թեմի առաջնորդանիստ եկեղեցին օծեցինք Սրբոց Ղեւոնդյաց անունով, որպեսզի Տիրոջ խաչին հուսացյալ սուրբ վկաների հիշատակն ու ավանդը, նրանց հավատքի ու հայրենասիրության օրինակը քաջալերի ու ամրապնդի ձեզ եւ ձեր զավակներին, եւ Խաղաղականի ափերին միշտ շեն ու պայծառ լինի հայոց հոգեւոր ու ազգային կյանքը: Միշտ եւ ամենուր աներկրա հավատքով պիտի ճանաչենք Սուրբ Ավետարանը մեզ հայր եւ Սուրբ Եկեղեցին մեզ մայր: Այս տեսիլքով նահատակվեցին Սուրբ Ղեւոնդյանք, մահվանը հանդիման հոչակելով, որ ոչ ոք եւ ոչինչ չի կարող հեռացնել մեր ժողովրդին Քրիստոսից՝ «ոչ հրեշտակք եւ ոչ մարդիկ, ոչ սուր եւ ոչ հուր, ոչ ջուր, ոչ ամենայն զինչ եւ են դառն հարուածք» (Եղիշէ): Հետագա հազար հինգ հարյուր տարիների աղետների ու ավերների, բռնության ու հալածանքների եւ կոտորածների մեջ նույնը եղավ պատասխանը մեր ժողովրդի. մահը հանձն առանք, բայց չուրացանք Քրիստոսին եւ Տիրոջ հետ որտեղ էլ ապրեցինք, չուրացանք մեր ազգն ու Հայրենիքը, մեր սուրբ հիշատակները: Արդարեւ, Քրիստոսի խաչը միայն չարչարանքների ու տառապանքների խաչ չէ, այլեւ փառքի ու հաղթության: Մեր նորագույն պատմության շրջանում մեր ժողովուրդը, թոթափած տառապանաց բեռը դարավոր հալածանքների, նեղությունների, Ցեղասպանության, այլեւս վերցրեց խաչը փառքի ու հաղթանակի: Այս խաչով վերականգնվեց մեր անկախ պետականությունը, զարթոնքը հոգեւոր-եկեղեցական անդաստանում, հաղթանակեց արցախյան ազատամարտը, եւ փառքի այս խաչով պիտի ընթանանք դեպի նորանոր լուսավոր հորիզոնները մեր գալիքի:

Խաչվերացի խորհրդով՝ խաչի բարձրացման ու փառաբանման հիշատակներով այսօր տեսնում ենք մեր Տիրոջը, որ խաչի վրա բազուկները տարածելով մահվան իշխանությունից փրկեց եւ սուրբ խաչի հովանու ներքո հավաքեց Իր ժողովրդին: Բազում ազգերի հետ մեզ էլ կանչեց Տերը, որպեսզի առաջնորդվենք տիեզերակեցույց խաչի պարգեւած կենսաբեր ու բարեբեր ուղիներով, որպեսզի պահապան զենք ունենանք խաչը հողմերի դեմ, չսպառվենք անցողիկ փոթորիկներից: Արդ, աշխարհասփյուռ մեր ժողովրդի եւ վերականգնված հայրենի պետականության վերածնված կյանքի մեջ այսօր շողում է ամենահաղթ ու ամենակեցույց զորությունը խաչի, որի համար փառք եւ գոհություն մատուցելով Տիրոջը, փառաբանենք խաչը, «որ կանգնեալ ի մէջ տիեզերաց. յոյս եւ ապաւէն ազգի մարդկան. սա պահեսցէ մեզ ամենայն վտանգից», եւ քաւ լիցի, որ մենք պարծենանք «այլ բանով, քան միայն մեր Տէր Յիսուս Քրիստոսի խաչով» (Գաղ. Զ 14):

Սիրելիներ, Խաչվերացի տոնի խորհուրդը հորդոր է հավատացյալներիս՝ միշտ հիշելու մեր Տիրոջ ամենամեծ պատվիրանը՝ միմյանց հանդեպ սերը եւ այն վկայելու գործերով մերձավորի, ազգի եւ մարդկության բարիքի ու բարօրության համար: Մենք հավատում ենք, որ դուք պիտի շարունակեք սիրո այս ոգով ծառայել միմյանց, հայությանը, մեր Սուրբ

Եկեղեցուն, հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ Հայրենիքին: Հայրապետական Մեր պատգամն ենք բերում ձեզ, որ հաստատուն մնաք հավատքի մեջ, արթուն պահեք եկեղեցասիրության եւ ազգանվիրումի ոգին, անվարան հույսով ու սիրով ձեր կյանքը կառուցեք օրհնության ներքո մեր Սուրբ Եկեղեցու, որը զորություն պիտի տա ամենքիդ՝ դիմակայելու տարբեր մարտահրավերների, հավատարիմ մնալու խաչով հաստատված եւ մեր կյանքի մեջ վկայված քրիստոնեական արժեքներին եւ արժանանալու մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկարար շնորհներին:

Այսօր միահորհուրդ աղոթքով մեր նախնյաց հետ կրկին ու կրկին օրհնաբանենք Տիրոջը, որ պարգեւեց զորությունը խաչի՝ **հավիտյան** «կանգնեալ ի մէջ տիեզերաց. յոյս եւ ապաւէն ազգի մարդկան», եւ հայցենք միաբան. «Սուրբ խաչ Քո շնորհեցեր զէն Եկեղեցւոյ Քում Սրբոյ. սովաւ պահպանեա զժողովուրդս Քո, Քրիստոս»:

Սրբոց Ղեւոնդյաց բարեխոսությունը հայցելով՝ վերստին Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում եկեղեցին կառուցողներին, շինարարներին, բարերար մեր զավակներին, բոլորին, ովքեր աղոթքով, գործով ու ջանադրությամբ իրականացրեցին առաջնորդանիստ եկեղեցու կառուցման ծրագիրը:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված միշտ շեն ու պայծառ պահի ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդանիստ եկեղեցին, եւ դուք ձեր շնորհալի ու բարեջան թեմակալ առաջնորդի գլխավորությամբ բազմապատկեք եկեղեցաշեն ու հայրենաշեն ձեր գործերը՝ ի փառս Աստծո, ի պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ ի բարգավաճումն հայրենի մեր երկրի: Թող Տերը խաղաղ ու բարգավաճ պահպանի Ամերիկան եւ նրա ապրվածասեր ժողովրդի կյանքը:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ այժմ եւ յաւիտեանս. ամէն: